ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մարտի 2024 թվականի N 111 -Ա

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԱՆՑԱԾ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրի հողօգտագործողների՝ 2023-2024 թվականներին Սյունիքի մարզպետին ուղղված դիմումները և Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետի 06.03.2024թ. զեկուցագիրը ՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Ադրբեջանի ագրեսիայի ժամանակ հակառակորդի տիրապետության տակ անցած Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրի բնակիչներին սեփականության կամ վարձակալության իրավունքով պատկանող հողամասերի ուսումնասիրություն կատարելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ հողամասերի ուսումնասիրության աշխատանքներն իրականացնել 10 աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքները ներկայացնել քննարկման:

2024-03-29 16:15:00 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2024թ. մարտի 29
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. մարտի 29 -ի
N 111 -Ա որոշման

ԿԱԶՄ

Ադրբեջանի ագրեսիայի ժամանակ հակառակորդի տիրապետության տակ անցած Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրի բնակիչներին սեփականության կամ վարձակալության իրավունքով պատկանող հողամասերի ուսումնասիրություն կատարելու նպատակով ստեղծված հանձնաժողովի

Ռոբերտ Կոստանդյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ,
Սեյրան Ավետիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ,
Էդուարդ Միրզոյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի փորձագետ:

2024-03-29 10:50:15 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար **Է. Մարտիրոսյան**